ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

Հեռ. 6 – 00- 89 16.03.2012թ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով . «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 08.12.2011թ. օրենքի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ

1. Վերակազմավորել << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավանի գյուղապետարանի աշխատակազմ >> համայնքային կառավարչական հիմնարկի:

2. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավանի գյուղապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի

3. Առաջարկել համայնքի ղեկավարին կատարել պետական գրանցում:

Ավագանու անդամներ՝

Հ.Արամյան --- Ռ.Գրիգորյան ,

Վ.Հարությունյան – Ս.Կարապետյան – ,

Մ.Հակոբյան – Է. Սարգսյան - ,

Գ.Հարությունյան-

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

Հեռ. 6 – 00- 89 16.03.2012թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ N54 ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի 2 փետրվարի 2012թ. N 4 արձանագրության պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 2-րդ բաժնի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ:
«17. Հաստատություն ընդունվում են մինչև 6 (վեց) տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք խառը խմբեր որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան»:

Ավագանու անդամներ՝

Հ.Արամյան --- , Ռ.Գրիգորյան – ,

Վ.Հարությունյան – , Ս.Կարապետյան – ,

Մ.Հակոբյան – , Է. Սարգսյան - ,

Գ.Հարությունյան-

ԱՅԳԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ